# ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

## ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԸ ԵՒ ՄԵՆՔ՝ ՀԱՅԵՐՍ

Հանրագիտարանը, որպես գրականության առանձնահատուկ տեսակ (ժանր), ձևավորվել է դեռևս հին եգիպտական քաղաքակրթության օրոք (Ք. ծ. ա. Բ. հազարամյակի 2-րդ կեսին), Հին Չինաստանում՝ Ք. ծ. ա. ԺԲ.-Ժ. դարերում, Հին Հունաստանում՝ Ե.-Դ. դարերում, երբ առաջացել է գիտելիքը խմբավորելու և դասակարգելու պահանջը:

Հին աշխարհի ամենահայտնի և ամբողջական հանրագիտարանը, որը գրեթե ամբողջությամբ հասել է մեզ, Պլինիոս Ավագի (23-79) «Բնական պատմություն» (37 գիրք, “Historia Naturalis”) աշխատությունն է և ամփոփում է իր ժամանակի գիտելիքի ամբողջ պարապատկերը՝ աստղագիտություն, փիլիսոփայություն, աշխարհագրություն, ֆիզիկա, քիմիա, բուսաբանություն, տեխնիկա, գյուղատնտեսություն, բժշկություն, ճարտարապետություն, արվեստ, հանքաբանություն և այլն: Ավելին, հոդվածներն ընդմիջվում են արկածային պատմություններով, անեկդոտներով, առանձին հեղինակների ստեղծագործություններով՝ հավանաբար գրքերն ավելի գրավիչ դարձնելու նպատակով:

Նոր ժամանակների ամենանշանավոր հանրագիտարանը Դենի Դիդրոյի և նրա համախոհների կազմած այսպես կոչված «Ֆրանսիական մեծ հանրագիտարանն» է՝ «Հանրագիտարան կամ գիտությունների, արվեստների և արհեստների... բացատրական բառարան» (1751-80, 35 հատոր): Այն իսկական որակական թռիչք էր հանրագիտարանային գրականության մեջ և դարձել է նմուշօրինակ հետագա գրեթե բոլոր հանրագիտարանների համար: Այդ հանրագիտարանի բացառիկ արժեքը պայմանավորված էր նրանով, որ Դիդրոյին հաջողվել է նրա շուրջ համախմբել ժամանակի փիլիսոփայական մտքի հսկաներին (Ժան-Ժակ Ռուսո, Ժան Դ'Ալամբեր, Ֆրանսուա Վոլտեր, Էտիեն Կոնդիլյակ, Շառլ Մոնտեսքյո, Պոլ Հոլբախ և ուր.), որոնք, լինելով Լուսավորականության գաղափարախոսներ, իրենց հոդվածներում ներկայացրել են ժամանակի նոր ու առաջադիմական բազմաթիվ գաղափարներ և հասկացություններ:

Դիդրոն սահմանել է նաև հանրագիտարանի նպատակը՝ աշխարհով մեկ սփռված գիտելիքների մեկտեղումը, համակարգումը և փոխանցումը գալիք սերունդներին (որպեսզի նախորդ սերունդների աշխատանքը հաջորդների համար ապարդյուն չանցնի):

Մեզանում հանրագիտարանային բնույթի եղել են գրեթե բոլոր պատմիչների երկերը: Բայց բուն հանրագիտարանային սկզբունքով պատրաստված առաջին գիրքը Արսեն դպիր Կոստանդնուպոլսեցու «Գիրք սահմանաց յոգնադիմի իրողութեանց...» հանրագիտական բառարանն է, որը լույս է տեսել 1749-ին Կ. Պոլսում:

Այդ հանրագիտարանի շուրջ հայտնի պատճառներով նման համախմբում տեղի չի ունեցել, բայց աշխատանքը շարունակվել է հայ մշակույթի անհատ երախտավորների ջանքերով: Եւ ի բարեբախտություն մեզ, այդ փարիններին ստեղծվել են մի շարք անանցելի արժեք ունեցող հանրագիտարան-բառարաններ:

Բառարանագրությունը մեզանում ձեւավորվել է դեռեւս ԺԱ. դարում եւ կայացման 1-ին փուլն ապրել է մինչեւ ԺԶ. դարը: Հայտնի են ԺԲ. դարի՝ Արիստակես Գրիչի ուղղագրական բառարանը, ապա՝ «Բառք քերականին», «Հանդէս բանաստեղծաց», «Բառք քրթողականք» եւ այլ բառարաններ: Իսկ առաջին հայերեն տպագիր բառարանը թարգմանական է՝ Ֆրանչեսկո Ռիվոլայի «Բառգիրք հայ-լատին...»-ը (1621): Նրան հաջորդել են Աստվածատուր Ներսեսովիչի «Բառգիրք լատինացւոց եւ հայոց» (1695) եւ Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց» (1698) ընդարձակ (8500 բառ) բառարանները:

Մխիթար Սեբաստացու եւ նրա աշակերտների ջանքերով ստեղծված «Բառգիրք հայկազեան լեզուի» (հ. 1, 2, 1749, 1769) բառարանի տպագրությամբ դրվել է հայ նոր բառարանագրության հիմքն ու կանխորոշվել հայկական գիտական տերմինաբանության զարգացման ընթացքը: Այդ գործն իր զարգացումն է ապրել հետագա բառարանագիրների ջանքերով, ստեղծվել են բացատրական, ստուգաբանական, անձնանունների, մասնագիտական, երկլեզվյան (նաեւ թարգմանական) եւ այլ բառարաններ: Դրանցից նշանավոր են հատկապես Գաբրիել Ավետիքյանի, Խաչատուր Սյուրմելյանի եւ Մկրտիչ Ավգերյանի «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (հ. 1-2, 1836-37), Նորայր Բյուզանդացու «Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն» (1884), Սիմոն Երեմյանի «Պատկերազարդ բառգիրք գործնական գիտութեանց» (1900), Հարություն Դաղբաշյանի «Լիակատար բառարան ռուսերէնից հայերէն» (1903), Սիմոն Գաբամաճյանի «Նոր բառգիրք հայերէն լեզուի» (1910) եւ այլ բառարաններ: Այդ եւ հետագա (Հրաչյա Աճառյանի, Ստեփանոս Մալխասյանի եւ այլ.) բառարաններով ստեղծվել է հսկայական բառամթերք, որն օգտագործվել է հանրագիտական գրականության մեջ:

Իսկ հանրագիտարանային մշակույթը շարունակվել է Մկրտիչ Ավգերյանի «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն Սրբոց» (հ. 1-12, Վնտ., 1810-15), Մատթեոս Մաղաքիա Թեոփիլյանցի «Կենսագրութիւն երեւելի արանց» (Վնտ., 1939), Նշան Ճիվանյանի «Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական եւ դիցաբանական յատուկ անուանց հանդերձ հայկական յատուկ անուանք» (Կ. Պոլիս, 1879), Կարապետ Աբրոյանի «Պատկերազարդ Նոր կաղանդչեք համառօտ կենսագրութիւն երեւելի արանց» (Վնտ., 1891), Սուքիաս Էփրիկյանի «Բնաշխարհիկ բառարան» (հ. 1-2, Վնտ., 1902-07), Հայկ Տեր-Աստվածատրյանի «Բառարան հայ կենսագրությանց» (Թ., 1904), Համբարձում Առաքելյանի «Հանրագիտական բառարան» (Թ., 1915), Մկրտիչ Պոտուրյանի «Հայ հանրագիտակ» (Բուխարեստ, 1938) եւ այլ աշխատություններով: Հանրագիտական կարեւոր տեղեկություններ են պարունակում նաեւ հայերեն տարեգրքերը, որոնցից շահեկանորեն առանձնանում է հատկապես Թեոդիկի «Ամէնուն տարեցոյցը» (1907-29):

Չնայած Ի. դարի 1-ին տասնամյակներին արեւելահայ մշակույթի կենտրոն Թիֆլիսում Հովհ. Թումանյանը, Ավետիք Արասխանյանը, Համբարձում Առաքելյանը (նա նաեւ կազմել ու 1915-ին տպագրել է երկհատոր «Հանրագիտական բառարանի» 1-ին հատորը, 2-րդը դեռեւս անտիպ է) եւ ուրիշներ արծարծել են ազգային հանրագիտարան պատ-

բաստելու հարցը, բայց հանգամանքները դրա համար նպաստավոր չէին (ոչ միայն պետություն ու պետական հոգածություն չկար, այլեւ անկայուն էր քաղաքական դրությունը, իրար էին հաջորդում պատերազմներն ու հեղափոխությունները):

Միայն 1932-ին արդեն Հայաստանում (ՀՀ ներկայիս տարածքում) հնարավոր եղավ սկսել «Հայկական խորհրդային հանրագիտարանի» նախապատրաստման աշխատանքներ: ՀԿԿ կենտկոմի որոշմամբ ստեղծվել է հատուկ խմբագրություն՝ հայտնի պետական գործիչ, հրապարակախոս Դրաստամատ Տեր-Սիմոնյանի ղեկավարությամբ: Աշխատանքներին մասնակցել են նաեւ հայտնի մտավորականներ Մանուկ Աբեղյանը, Հակոբ Մանանդյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը եւ ուրիշներ, սակայն բավարար գիտական ու տեխնիկական հնարավորությունների բացակայության պատճառով հրատարակությունը չի իրականացվել: Լույս է ընծայվել ընդամենը 1 պրակ, եւ դրանով 1936-ին գործն ավարտվել է:

Հայկական հանրագիտարան ստեղծելու հարցը վերստին բարձրացվել է 1960-ական թվականներին, այսպես կոչված «ձնհալի» ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը յուրատեսակ զարթոնք ապրեց: «Հայկական սովետական հանրագիտարան հրատարակելու մասին» որոշում ընդունել է ՀԿԿ ԿԿ նախագահության 1964 թ. հոկտեմբերի 6-ի նիստը (արձանագրություն դ 36, կ. 10): Հարցը ներկայացրել է Սուրեն Թովմասյանը, բստ էության արտահայտվել են Նազուշ Հարությունյանը, Հովհաննես Բաղդասարյանը, Անտոն Քոչինյանը եւ Յակով Զարոբյանը: Նույն որոշումով՝ ՀՍՀ հրատարակման պատասխանատվությունը դրվել է ՀԽՍՀ ԳԱ-ի վրա, իսկ աշխատանքի կատարման համար նախատեսվել է 5 տարի (1967-72 թթ.):

Իհարկե, այդ կարճ ժամկետում 10-հատորյա հանրագիտարան ստեղծել պարզապես հնարավոր չէր: Ճիշտ է՝ նախապատրաստական աշխատանքներն սկսվել են նախատեսված 1967-ին, բայց ավարտվել են միայն 1987-ին՝ 20 տարի անց, իսկ 10-ի փոխարեն հրատարակվել է 13 հատոր: Պետք է ասել, որ Գիտությունների ակադեմիան՝ նախագահ Վիկտոր Համբարձումյանի ղեկավարությամբ, որ նաեւ ՀՍՀ 1-ին հատորի (1974) գլխավոր խմբագիրն էր եւ հրատարակության գիտահրատարակչական խորհրդի ու խմբագրական կոլեգիայի անփոփոխ նախագահը, կազմված խմբի հետ հսկայական աշխատանք է կատարել: Նախ ստեղծվել են գիտության ու գիտելիքի բոլոր բնագավառների թեմատիկ բառացանկերը, ապա՝ ընդհանուր բառացանկը՝ բնույթով համապարփակ, կառուցվածքով այբբենական բազմահատոր հանրագիտարանի համար: Այդ նպատակով օգտագործվել են ոչ միայն հայտնի հանրագիտարանները, այլեւ գիտական ու պարբերական մամուլը, ինչպես նաեւ անցյալում ստեղծված հայերեն բառարանների հարուստ բառապաշարը: Մշակվել են հոդվածների կազմման տիպային սխեմաներ, մատենագիտության տրման կարգն ու ծավալը, մշակվել է համառոտագրությունների ու կրճատումների համակարգ եւ այդ ամենն ամփոփվել է Մեթոդական ցուցումներում: Ավելին, Վիկտոր Համբարձումյանն անձամբ է ընտրել նաեւ հանրագիտարանի խմբագիրներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով նրանց ընդհանուր զարգացածության, մասնագիտական հմտությունների եւ ստեղծագործական կարողությունների վրա:

Նախապես ընտրված 150 հզ. բառ-տերմինից վերջնական բառացանկում թողնվել է միայն 50 հզ-ը, եւ համապատասխան նյութը շարադրվել է 12 հիմնական ու 1 լրացուցիչ

հատորներում: Վերջինս, ինչպես հայտնի է, ամբողջովին նվիրված է Հայաստանին եւ կոչվում է «Սովետական Հայաստան»:

Ինչ վերաբերում է հոդվածների պատրաստմանը, ապա այն իրականացվել է գիտաճյուղային խորհուրդների (դրանցում ընդգրկված էին համապատասխան ոլորտների ճանաչված գիտնականները) հսկողությամբ: Նրանք էին երաշխավորում հոդվածագիր հեղինակներին եւ վերահսկում պատրաստված նյութի գիտական որակը: Արդյունքում՝ հոդվածների զգալի մասը տպագրվել է հայ երեւելի մտավորականների ստորագրությամբ, որն այդ հրատարակության ակնհայտ առավելություններից է:

Լուրջ աշխատանք է կատարվել նաեւ պատկերազարդման ուղղությամբ. հատորներում զետեղված 300-ից ավելի քարտեզների զգալի մասը կազմվել է առաջին անգամ՝ հանրագիտարանի համար, իսկ պատկերազարդման նյութը բծախնդրորեն ընտրվել եւ պատշաճորեն մշակվել է: Պատրաստվել է նաեւ հատուկ տառատեսակ («հանրագիտարանային», հեղինակ՝ Հենրիկ Մնացականյան) հանրագիտարանը տպագրելու համար:

Ավելորդ չէ արձանագրել, որ այդ ամենի շնորհիվ ՀՍՀ-ն նախկին Խորհրդային Միության տարածքում տպագրված ազգային հանրագիտարաններից լավագույններից էր: Պատկերն ամբողջացնելու համար ասենք, որ նախադեպը չունեցող այդ հրատարակությունը բացառիկ էր նաեւ իր հսկայական տպաքանակով՝ 100 հզ. օրինակ, եւ 1988-ին արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի [Վիկտոր Համբարձումյան, 5-12-րդ հատորների գլխավոր խմբագիր Մակիչ Արզումանյան, գլխավոր խմբագրի տեղակալ Ջավադ Թորոսյան եւ պատասխանատու քարտուղար գրող Հայկ Խաչատրյան]:

Ղարաբաղյան ազատագրական շարժման առաջին փուլում, երբ խնդրի պատմությունն ու տրամաբանությունը խորհրդային մտավորականությանը ներկայացնելը դարձել էր հրատապ, հրատարակչությունը՝ գլխավոր խմբագիր Կոստանդին Խուդավերդյանի ղեկավարությամբ, պատրաստել ու 1990-ին ռուսերեն հրատարակել է «Հայկական հարց» հանրագիտարանը՝ 15 հզ. օրինակով, եւ տարածել Միության ռուսալեզու տարածքում:

Անկախացումից եւ ղարաբաղյան հաղթական պատերազմից հետո երկրում սկսված տարատեսակ ճգնաժամերը մեծապես խոչընդոտել են նաեւ հանրագիտարանաստեղծ աշխատանքը: Այդուհանդերձ՝ հրատարակչությունը ոչ միայն կարողացավ դիմակայել բազմաթիվ ու բազմատեսակ դժվարությունների ու փորձությունների, այլեւ շարունակեց իր առաքելությունը եւ տպագրեց մի շարք հանրագիտարաններ՝ «Հայկական համառոտ հանրագիտարան» (4 հատոր), 1990-2003 թթ., ընտանեկան հանրագիտական մատենաշար [«Տնային տնտեսության հանրագիտարան», 1997 թ., «Հանրամատչելի բժշկական հանրագիտարան», 2001 թ. «Հայաստանի բնաշխարհ» հանրագիտարան, 2002 թ.], թեմատիկ [«Հայկական հարց», 1996 թ., ռուս.՝1990 թ., «Քրիստոնյա Հայաստան», 2002 թ., «Հայ Սփյուռք», 2003 թ., «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ». 1988-94, 2005 թ., «Ով ով է. հայեր» կենսագրական (2 հատոր), 2005-07 թթ.], դպրոցական [«Ինչ է, ով է» (4 հատոր), 1984-87 թթ., «Ոսկեփորիկ» (3 հատոր), 1990-99 թթ., «Դպրոցական մեծ հանրագիտարան» (2 գիրք, 4 հատոր), 2007-10 թթ.]:

Բառացիորեն վերջերս (2012) լույս ընծայված «Հայաստան» հատորը ՀՀ անկախացումից եւ ԼՂՀ հռչակումից հետո առաջին հանրագիտարանն է, որտեղ նորովի ներ-

կայացվում են հայոց ամբողջական պատմությունն իր բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում, հայկական պետականության բարդ ու դժվարին ճանապարհը, տնտեսության, գիտության, կրթության, մշակույթի եւ մյուս բնագավառների նվաճումները, հայոց հոգեւոր կյանքն ու Եկեղեցին, Սփյուռքը, Հայաստան աշխարհը՝ իր ֆիզիկաաշխարհագրական ու երկրաբանական նկարագրով, հասարակական-քաղաքական զարգացումներով եւ այն կարեւոր իրադարձություններով, որոնք այս կամ այն կերպ առնչվում են հայերին ու հայկականությանը:

Հատորը բաղկացած է երկու մասից՝ «Հայաստանի Հանրապետություն» եւ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն». նպատակը ԼՂՀ փաստացի անկախությունը հերթական անգամ շեշտադրելն է եւ հայկական երկրորդ պետության կայացման ու պետականաշինության գործընթացը ներկայացնելը: Եւ միայն այդ նպատակով հայոց միասնական պատմությունից առանձնացվել են Արցախ աշխարհի պատմությունն ու մշակույթը եւ տրվել գրքի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» մասում:

«Հայաստան» հատորն իր ընդգրկումով, կառուցվածքով եւ շարադրանքի առանձնահատկություններով բնականաբար որոշակի աղերսներ ունի վերոհիշյալ «Սովետական Հայաստան» հատորի հետ, սակայն սկզբունքորեն տարբերվում է նրանից, որովհետեւ զերծ է գաղափարախոսական եւ այլազան կապանքներից եւ հարեւան ժողովուրդների շինծու պատմությանը «հարմարվելու» խորհրդային պարտադրանքից:

Երկրորդ տարբերությունը մեր նորօրյա պատմությունն է՝ ՀՀ անկախացումն ու ԼՂՀ հռչակումը, որոնք մեծ ձեռքբերում են հայոց պետականության պատմության մեջ: Այդ իրադարձությունները պատշաճորեն ներկայացված են հատորի՛ եւ «Հայաստանի Հանրապետություն», եւ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» մասերում՝ յուրաքանչյուրում շեշտադրելով ազգային-ազատագրական պայքարի իրեն բնորոշ առանձնահատկությունները՝ ՀՀ-ում՝ ազատագրական շարժման գաղափարաքաղաքական կազմակերպման, ԼՂՀ-ում՝ հերոսամարտի պատմությունները:

Մյուս, թերեւս սկզբունքային, տարբերությունն այն է, որ սույն հատորն ինքնուրույն գիրք է, մինչդեռ նախկինը բազմահատորյակի բաղկացուցիչ մաս էր եւ առանձին հասկացությունների հանգամանորեն անդրադառնալու, հանրապետության պետական այրերի, հայտնի գործիչների ու մտավորականների դիմանկարները զետեղելու, առանձին անձանց կենսագրությունները ներկայացնելու խնդիր չուներ, իսկ այս հատորում դրանք պարտադիր են՝ նյութի ամբողջականությունն ապահովելու առումով:

Գրքում նյութը շարադրված է թեմատիկ բաժիններով: Նախ ներկայացված են երկու պետությունների խորհրդանիշները, պետական կարգն ու կառավարման մարմինները՝ հանրապետությունների նախագահները, օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունները, այնուհետեւ ՀՀ եւ ԼՂՀ սահմանադրությունները, ուժային կառույցները, բնակչության ժողովրդագրական պատկերն ու սոցիալ-տնտեսական վիճակը:

Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական նկարագիրը տրված է երկրաբանական կառուցվածքի, լեռնագրության, կլիմայի, ջրերի եւ հողերի, բուսական ու կենդանական աշխարհների մասին ծավալուն հոդվածներով, ներկայացված են բնության եւ կենսաբազմազանության պահպանության առկա վիճակն ու խնդիրները, այդ նպատակով ստեղծված ազգային պարկերը, արգելավայրերն ու արգելոցները:

Հայաստանի եւ հայոց պատմության շարադրանքում առավել հանգամանորեն ներկայացված են Հայաստանի առաջին, երկրորդ եւ երրորդ հանրապետությունները՝ որպես հայոց պետականության զարգացման հաջորդական փուլեր: Երրորդ հանրապետության պատմության մեջ շեշտադրված են ՀՀ անկախացման ու ԼՂՀ հռչակման գործընթացները՝ նորօրյա ազգային-ազատագրական պայքարի եւ Արցախյան շարժման առանձնահատկությունները: Չեն շրջանցվել նաեւ այն քաղաքական, տնտեսական ու սոցիալական դժվարությունները, որոնք հայ ժողովուրդը հաղթահարել ու հաղթահարում է անկախությունից ի վեր՝ պետականության կայացման ճանապարհին: Կարեւոր անդրադարձ կա նաեւ մեր նորանկախ պետության արտաքին քաղաքականությանը, որը նոր երեւույթ է Հայաստանի պատմության մեջ:

Տնտեսության առանձին ոլորտների պատմությունների համառոտ շարադրանքում տեղ են գտել նաեւ ՀՀ եւ ԼՂՀ կառավարությունների ձեռնարկած այն բարեփոխումները, որոնք անհրաժեշտ էին շուկայական տնտեսահարաբերությունների նոր համակարգ ստեղծելու համար:

Առանձին բաժիններով ներկայացված են նաեւ Հայ Եկեղեցին ու կրոնական կազմակերպությունները, Սփյուռքը՝ իր համայնքային, հոգեւոր ու կրթամշակութային կառույցներով, որոնք այսօր նոր առաքելություն ունեն հայոց նորանկախ հանրապետությունների կայացման ու զարգացման գործում:

Գրքում զգալի տեղ է հատկացված գիտությանը, որը ներկայացված է 3 խոշոր՝ բնական, հասարակական եւ տեխնիկական գիտություններ ենթաբաժիններով: Պատշաճորեն ներկայացված է նաեւ ՀՀ ԳԱԱ-ն՝ որպես հանրապետության գիտության կազմակերպման ու կառավարման առանցքային հաստատություն:

Գրքի «Մշակույթ» բաժինը ներառում է «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Ճարտարապետություն», «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Պարարվեստ», «Թատրոն», «Կրկես», «Կինո» ենթաբաժինները, որտեղ ամփոփված են հայոց բազմադարյան մշակույթի պատմությունն ու արդի վիճակը տվյալ ոլորտներում:

Զանգվածային լրատվության միջոցները՝ հայ պարբերական մամուլը, ռադիոն եւ հեռուստատեսությունը, լրատվական գործակալությունները ներկայացված են իրենց սկզբնավորումից մինչեւ վերջին շրջանի զարգացումները՝ համացանց, էլեկտրոնային եւ առցանց լրատվության միջոցներ եւն:

ՀՀ եւ ԼՂՀ վարչատարածքային բաժանման բաժիններում ներկայացված են հանրապետությունների մայրաքաղաքներն ու մարզերը (ԼՂՀ-ում՝ շրջանները)՝ պատմական համառոտ ակնարկով, ներկայի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական ու կրթամշակութային ընդհանուր նկարագրով:

Հատորի բաղկացուցիչ մաս են հարուստ պատկերազարդումն ու թեմատիկ քարտեզները. ընդ որում, վերջիններիս մեծ մասը ներկայացված է միացյալ, որով մեկ անգամ եւս ընդգծվում է ՀՀ եւ ԼՂՀ համապատասխան ոլորտների օրգանական միասնությունը:

Գրքի վերջում զետեղված հավելվածներում տրված են ՀՀ եւ ԼՂՀ նախագահների, ԱԺ-ների նախագահների, վարչապետների, Հայաստանի Ազգային ու Արցախի հերոսների, մի շարք պետական, հասարակական-քաղաքական գործիչների կենսագրությունները, Խորհրդային Միության եւ Սոցիալիստական աշխատանքի հայ հերոսների, Փառ-

քի 3 աստիճանի շքանշանակիրների, ինչպես նաև ԽՍՀՄ, ՀՀ և ԼՂՀ պետական և այլ մրցանակակիրների, ճանաչված հայ մարզիկների (օլիմպիական, աշխարհի և Եվրոպայի չեմպիոններ) ցուցակները են։

Հակիրճ ներկայացված են նաև այն կուսակցությունները, որոնք ՀՀ անկախացումից հետո երբևէ ընտրվել են ՀՀ օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնում։

Հատորը եզրափակում է Ցուցիչը, որտեղ այբբենական կարգով տրված են հիմնական տեքստի շարադրանքում հանդիպող անձնանունները, տեղանունները, կարևոր հասկացությունները, որոնք խիստ օգտակար են ծավալուն գրքում արագ կողմնորոշվելու և անհրաժեշտ տեղեկությունը գտնելու համար։

«Հայաստան» հատորը շուրջ 100 հեղինակի, բազմաթիվ գերատեսչությունների, բուհերի, ակադեմիական ինստիտուտների գիտնականների համատեղ աշխատանքի արգասիք է՝ աշխատանք, որն արժանի է խորին հարգանքի և շնորհակալության։

Հրատարակչությունը ներկայումս զբաղված է «Հայ գրատպության և գրքարվեստի» հանրագիտարանի պատրաստմամբ։ Այն ներկայացնելու է հայ գրավոր մշակույթի 1600-ամյա ամբողջական պատմությունը. գրատպությունից առաջ՝ հեղինակներ, գրիչներ, ձեռագիր մատյաններ, ծաղկողներ, կազմարարներ ևն, գրատպությունից (1512) հետո՝ տպագրված գրքեր (1512-1800-ի բոլոր հնատիպ գրքերը՝ առանձին-առանձին), տպարաններ, տպագրիչներ, գրադարաններ, կոթողային հրատարակություններ, գրքի և գրականության հետ կապված կարևոր իրադարձություններ։ Գրքում պատշաճորեն ներկայացվելու են նաև հայ տպագիր մամուլը, գրասեղծ ոլորտի երևելի ներկայացուցիչները (հրատարակիչներ, խմբագիրներ, մեկենասներ), գրքի և մամուլի մասնագետներ (մատենագետներ, գրադարանագետներ ևն), գրողներ և ուրիշներ։

Հուսանք, որ մեզ կհաջողվի այդ հսկայական նյութը նույնպես լավագույնս մեկտեղել 1 հատորում և տպագրել այս (2013) տարի։

Ամփոփելով ավելացնենք նաև, որ մեզ այսօր անչափ ուրախացնում է այն, որ ընթերցողն սպասում է մեր հրատարակություններին, համացանցի բազմաթիվ կայքէջերում զետեղված հայերեն և հատկապես հայ իրականության ու հայերին վերաբերող նյութերը հիմնականում վերցված են մեր հրատարակություններից, կարևոր չէ, որ երբեմն՝ նաև առանց վկայակոչման։

«Հայկական հանրագիտարան. հրատարակչությունը» ներկայումս մեր երկրի միակ պետական հրատարակչությունն է, և հաջողությամբ շարունակում է իր առաքելությունը, իսկ մենք լավատեսությամբ սպասում ենք այն երանելի ժամանակներին, երբ մեզ հնարավորություն կընձեռվի սկսելու նոր, բազմահատոր «Հայկական հանրագիտարանի» հրատարակությունը։ Այն կլինի ՀՍՀ-ի վերախմբագրված, լրացված և նորացված՝ նորանկախ Հայաստանի հանրագիտարանը, ինչպիսին վաղուց արդեն ունեն անկախացած նախկին խորհրդային հանրապետություններից շատերը։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

Հայկական հանրագիտարանի
գլխավոր խմբագիր